6 փետրվարի 2019 թվականի N 70 - Ա

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 21-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ՎԱԲԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 703-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետում «2019 թվականի հունիսի 19-ը» բառերը փոխարինել «2019 թվականի դեկտեմբերի 20-ը» բառերով.

2) որոշման հավելվածը 14-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

15.	9405	Առաստաղի էլ. լուսատուներ՝ լրակազմով (լամպերով, կախիչներով, ամրակային դետալներով)	կգ	163	1 668 500
16.	7216	Մետաղական պրոֆիլներ՝ կախիչներով (հակակարկտային կայանի լուսավորման համակարգի համար)	կգ	416	4 570 350
17.	7608	Խողովակներ ալյումինի համաձուլվածքից	կգ	63	4 586 400
18.	3917	Պլ. խողովակների կցամասեր պոլիմերային նյութերից	կգ	12	745 000
19.	7308	Մետաղական կոնստրուկցիա՝ թելի դատարկ կոճերի պահպանման համակարգ	կգ	620	49 015 600
20.	7315	Մետաղական շղթաներ	կգ	59	6 792 000
21.	7315	Մետաղական շղթաներ	կգ	78	10 754 000
22.	7326	Մետաղական կոճեր	կգ	163	38 488 000
23.	7312	Ոլորված մետաղալար՝ առանց պատվածքի	կգ	10217	9 622 000

».

3) հավելվածի «Ընդամենը» պարբերության «102,935,000» թիվը փոխարինել «229,176,850» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. փետրվարի 11
Երևան